ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 14.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/89

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.03.2021թ. թիվ 26/26-1/4792-2021 գրությամբ Ա/Ձ Միքայել Բադալյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 25.03.2021թ. թիվ 01/10-105 գրության հիման վրա 31.03.2021թ. թիվ 26/26-1/4792-2021 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Միքայել Բադալյանին (հետայսու նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Միքայել Բաղալյանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Միքայել Բաղալյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/89 ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 11:00-ին և 14.04.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 25.03.2021թ. թիվ 01/10-105 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 2021թ. կարիքների համար կազմակերպվել է ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/21 ծածկագրով բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների գնման ընթացակարգ, որի արդյունքում 11 հունվարի 2021թ. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և Ա/Ձ Միքայել Բաղալյանի միջև կնքվել է բժշկական դիմակի մատակարարման թիվ ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/21-5 պայմանագիր:

Պայմանագրով մատակարարման ժամկետ է սահմանվել՝ ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է յուրաքանչյուր անգամ Գնորդից ապրանքների մատակարարման պատվերը ստանալու պահից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված ապրանքների քանակին համապատասխան, ընդ որում առաջին փուլի մատակարարման ժամկետը 20 օրացույցային օր է:

Գնորդի կողմից երկրորդ պատվերը 03.09.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել է Վաճառողին, ով մինչ օրս չի մատակարարել:

Հաշվի առնելով՝

Պայմանագրի 2.1.7.1 կետը (վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից) և

պայմանագրի 2.1.7 կետը (Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը մասնակի, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը):

Գնորդը մասնակի լուծում է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և Ա/Ձ Միքայել Բաղալյանի միջև 11.01.2021թ. կնքված թիվ ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/21-5 պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ կառավարությա 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակվել է տեղեկագրում և նույն օրը ուղարկվել Վաճառողի էլեկտրոնային փոստի հասցեին»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/89 ընթացակարգի շրջանակներում 09.04.2021թ. ժամը 11:00-ին և 14.04.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/89 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/89 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և Ա/Ձ Միքայել Բաղալյանի միջև 11.01.2021թ. կնքվել է թիվ «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/21-5» ծածկագրով բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով մինչ 2021թ. դեկտեմբերի 30-ը նախատեսվել է մատակարարել 100000 հատ «Բժշկական դիմակ»՝ յուրաքանչյուր անգամ Գնորդից ապրանքի/ների

մատակարարման պատվերը ստանալու պահից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված ապրանքի/ների քանակին համապատասխան, ընդ որում՝ առաջին փուլի պատվերի մատակարարման ժամկետը 20 օրացուցային օր է: Ապրանքի/ների մատակարարաման համար պատվերը Գնորդի կողմից Վաճառողին կատարվում է Գնորդի էլեկտրոնային փոստի հասցեից Վաճառողի էլեկտրոնային փոստի հասցեին պատվերը ուղարկելու միջոցով: Մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը Պատվիրատուի կողմից չպատվիրված ապրանքների մասով գործում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

3. Պատվիրատուն Ա/Ձ Միքայել Բաղալյանին ուղղված թիվ 01/10-164 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 2021թ. կարիքների համար կազմակերպվել է ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/21 ծածկագրով բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների գնման ընթացակարգ, որի արդյունքում 11 հունվարի 2021թ. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և Ա/Ձ Միքայել Բաղալյանի միջև կնքվել է բժշկական դիմակի մատակարարման թիվ ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/21-5 պայմանագիր:

Պայմանագրով մատակարարման ժամկետ է սահմանվել՝ ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է յուրաքանչյուր անգամ Գնորդից ապրանքների մատակարարման պատվերը ստանալու պահից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված ապրանքների քանակին համապատասխան, ընդ որում առաջին փուլի մատակարարման ժամկետը 20 օրացույցային օր է:

Գնորդի կողմից երկրորդ պատվերը 03.09.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել է Վաճառողին, ով մինչ օրս չի մատակարարել:

Հաշվի առնելով՝

Պայմանագրի 2.1.7.1 կետը (վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից) և պայմանագրի 2.1.7 կետը (Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը մասնակի, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը):

Գնորդը մասնակի լուծում է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և Ա/Ձ Միքայել Բաղալյանի միջև 11.01.2021թ. կնքված թիվ ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/21-5 պայմանագիրը»:

4. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 24.03.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 31.03.2021թ. թիվ 26/26-1/4792-2021 գրությունը, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 25.03.2021թ. թիվ 01/10-105 գրությունը՝ կից փաստաթղթերով, գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կեփանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և Ա/Ձ Միքայել Բաղալյանի միջև 11.01.2021թ. կնքվել է թիվ «ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/21-5» ծածկագրով բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով մինչ 2021թ. դեկտեմբերի 30-ը նախատեսվել է մատակարարել 100000 հատ «Բժշկական դիմակ»՝ յուրաքանչյուր անգամ Գնորդից ապրանքի/ների մատակարարման պատվերը ստանալու պահից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված ապրանքի/ների քանակին համապատասխան, ընդ որում՝ առաջին փուլի պատվերի մատակարարման ժամկետը 20 օրացուցային օր է: Ապրանքի/ների մատակարարաման համար պատվերը Գնորդի կողմից Վաճառողին կատարվում է Գնորդի էլեկտրոնային փոստի հասցեից Վաճառողի էլեկտրոնային փոստի

հասցեին պատվերը ուղարկելու միջոցով: Մինչև 2021 թվականի դեկտեմբերի 30-ը Պատվիրատուի կողմից չպատվիրված ապրանքների մասով գործում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:

Պատվիրատուն իր astghikgalstyan@inbox.ru էլեկտրոնային փոստի հասցեից Ա/Ձ Միքայել Բաղալյանի mikayelb98@gmail.com էլեկտրոնային փոստի հասցեին 09.03.2021թ. ուղարկել է 10000 հատ բժշկական դիմակի պատվեր:

Պատվիրատուն Ա/Ձ Միքայել Բաղալյանին ուղղված թիվ 01/10-164 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի 2021թ. կարիքների համար կազմակերպվել է ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/21 ծածկագրով բժշկական սարքավորումների, գործիքների և պարագաների գնման ընթացակարգ, որի արդյունքում 11 հունվարի 2021թ. «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և Ա/Ձ Միքայել Բաղալյանի միջև կնքվել է բժշկական դիմակի մատակարարման թիվ ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/21-5 պայմանագիր:

Պայմանագրով մատակարարման ժամկետ է սահմանվել՝ ապրանքների մատակարարումը Վաճառողի կողմից իրականացվում է յուրաքանչյուր անգամ Գնորդից ապրանքների մատակարարման պատվերը ստանալու պահից հաշված 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ Գնորդի կողմից պատվիրված ապրանքների քանակին համապատասխան, ընդ որում առաջին փուլի մատակարարման ժամկետը 20 օրացույցային օր է:

Գնորդի կողմից երկրորդ պատվերը 03.09.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկվել է Վաճառողին, ով մինչ օրս չի մատակարարել:

Հաշվի առնելով՝

Պայմանագրի 2.1.7.1 կետը (վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից) և պայմանագրի 2.1.7 կետը (Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը մասնակի, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը):

Գնորդը մասնակի լուծում է «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի և Ա/Ձ Միքայել Բաղալյանի միջև 11.01.2021թ. կնքված թիվ ՈՒԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/21-5 պայմանագիրը»:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 24.03.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>10 օրից ավելի</u>:***

Այսպիսով՝ Ա/Ձ Միքայել Բադալյանն իր և «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի միջև 11.01.2021թ. կնքված Պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով և ժամկետներում 100000 հատ «Բժշկական դիմակ» ապրանքի՝ «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին մատակարարելու պարտականությունը: Արձանագրում եմ, որ գործում առկա նյութերի համաձայն՝ Ա/Ձ Միքայել Բադալյանը չի մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքը, և ապրանքի մատակարարման ժամկետը խախտել է 10 օրից ավելի, որի արդյունքում Մասնակիցը թույլ է տվել Պայմանագրի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերությամբ նախատեսված էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Վերոգրյալի հաշվառմամբ գտնում եմ, որ Ա/Ձ Միքայել Բադալյանը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 31.03.2021թ. թիվ 26/26-1/4792-2021 գրությամբ Ա/Ձ Միքայել Բաղալյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Միքայել Բաղալյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**